ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Սեպտեմբերի 12-ին Փարիզի հայոց եկեղեցվո խորհրդարանի մեջ (Ռյու Ժան Կուժոն) Նորին Ս. Օծություն Գարեգին Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեցավ բացումը «Հայկական դեղարվեստական թանգարանի։

Ցուցափեղկերու մեջ ներկայացված են հին մանրանկարչության շատ հաջող ջրաներկի վերարտադրություններ, 17-րդ դարու հովվական թուղթեր, սքանչելի ասեղնագործ բանվածքներ, սիրուն հախճապակյա զարդարուն պնակներ։

Նորին Վեհափառությունը որպես մասնագետ մանրանկարչության և հնություններու, մանրակրկիտ բացատրություններ տվավ ցուցադրված բոլոր իրերու մասին։

Համաձայն այս փոքրիկ թանգարանը հիմնողներու հայտարարության, ապագային պիտի ընդարձակվի այսօրվան գործը, որ սկիզբ է հետագային հիմնվելիք ավելի մեծ հայկական թանգարանի մը։

(«Ազատ խոսք», 21 սեպտեմբերի 1950 թ.)

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Գրիգոր Նարեկացիի ծննդյան հազարամյակի առթիվ, Բուխարեստի հայոց եկեղեցիին մեջ տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն՝ կիրակի, 10 դեկտեմբեր 1950, կեսօրե վերջ ժամը 4,30-ին, որու ընթացքին թեմիս առաջնորդ Տ. Վազգեն Մայրագույն Վարդապետ խոսեցավ, ռումեն լեզվով, հայ մեծ բանաստեղծի մասին, ներկայացնելով անոր կյանքն ու գործը, թարգմանարար մեջբերումներ ընելով անոր «Ողբերգութիւն» մատյանեն։

Ապա տեղի ունեցան ընթերցումներ ռումեն լեզվով, Նարեկացիի գործերեն, որմե հետո եկեղեցվո երգչախումբը երգեց պատարագի մասեր։

Սույն հանդիսության ներկա էին Ռումեն Օրթոդոքս Եկեղեցվո պատրիարքական փոխանորդներ՝ Գերաշնորհ դոկտ. Անտիմ Սրբազան Եպիսկոպոս և Դիրաշնորհ Թեոդոսիզ Սրբազան Եպիսկոպոս՝ Աստվածաբանական ֆակուլտետի ռեկտոր, Ռուս և Բուլղար Օրթոդոքս Եկեղեցիներու ներկայացուցիչներ՝ Արժանապատիվ Տ. Տ. Պավել Ստատով և Գլիմենտ, ակադեմիկոս պրոֆեսոր Կալա-Կալյագտիոն, հայագետ պրոֆեսոր դոկտ. Վլատ Բընբցեանու, Հայկական դեմոկրատ կոմիտեի փոխ-քարտուղար Տ. Տեր-Գրիգորյան և Աստվածաբանական ֆակուլտետի բազմաթիվ պրոֆեսորներ ու ռումեն հոգևորականներ, ինչպես նաև ազգային մարմիններու անդամներ ու հայ և ռումեն հասարակության հոծ բազմություն մը։

Գերաշնորհ դոկտ. Անտիմ Սրբազան Եպիսկոպոս խոսք առնելով, իր դոհունակությունն ու գնահատանքը հայտնեց հանուն Ռումեն Օրթոդոքս Եկեղեցվո, ջերմ բարեմաղթություններ ընելով Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդին։

Հետ հանդիսության, բառերաստիճան հյուրերը առաջնորդությամբ Տ. Վազգեն Մայրագույն Վարդապետի և Տեր-Գրիգորյանի, այցելեցին Սովետական Հայաստանի շինարարության նվիրված Հայկական դեմոկրատ կոմիտեի ցուցահանդեսը, Հայ մշակույթի տան մեջ։ Ապա տեղի ունեցավ հյուրասիրություն մը Առաջնորդարանին մեջ։

(«Նոր Կյանք», 17 դեկտեմբերի 1950 թ.)